# «ԼԻՄԻԹԼԵՍ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-Ի «ԼԻՄԻԹԼԵՍ ՓՐԱՅՄ» ԼՐԱՑՈՒՑԻՉ ՌԻՍԿՈՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ, ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ, ԲԱՑ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ

Երևան-2025

**«ԼԻՄԻԹԼԵՍ ՓՐԱՅՄ» ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴ**

**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**

| Հազար ՀՀ դրամ | Ծնթ | 2025 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ | 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 4 | 5,756,718 | 3,412,900 |
| Ավանդներ | | - | - |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումներ | 5 | 1,900,028 | 1,520,006 |
| Կազմակերպության հետ կապված ֆիզիկական անձանց տրված վարկեր և փոխառություններ | | 40,253 | 40,103 |
| Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 6 | 15,830 | 8,059 |
| Այլ ակտիվներ | | - | - |
| **Ընդամենը ակտիվներ** | | **7,712,829** | **4,981,068** |
| **Պարտավորություններ** | | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտավորություններ | 7 | 639,853 | 401,880 |
| Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով | | 312 | 282 |
| Կրեդիտորական պարտքեր կառավարման վճարների գծով | 8 | 30,780 | 28,701 |
| Այլ պարտավորություններ | | 1,918 | 24,081 |
| Պահուստներ | | 298,099 | - |
| **Ընդամենը պարտավորություններ մինչև փայատերերին վերագրելի զուտ ակտիվները** | | **970,962** | **454,944** |
| **Փայատերերին վերագրելի զուտ ակտիվներ** | | **6,741,867** | **4,526,124** |

Սույն ֆինանսական հաշվետվությունները ստորագրված են 2026 թվականի հոկտեմբերի 26-ին:

Տիգրան Անտինյան
«Լիմիթլես Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ Տնօրեն

Արմեն Ազիզյան
«ՍթեփԱփ» ՍՊԸ ներկայացուցիչ

**«ԼԻՄԻԹԼԵՍ ՓՐԱՅՄ» ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴ**

**Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն**

| Հազար ՀՀ դրամ | Ծնթ | 2025թ հուլիսի 1-ից 2025թ սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում | 2025թ հունվարի 1-ից 2025թ սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում | 2024թ հուլիսի 1-ից 2024թ սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում | 2024թ հունվարի 1-ից 2024թ սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում |
|---|---|---|---|---|---|
| Տոկոսային եկամուտ | 6 | 41,663 | 89,488 | 24,107 | 64,718 |
| Շահաբաժիններից եկամուտ | 6 | 9,398 | 16,376 | 6,719 | 9,702 |
| Այլ եկամուտ | | - | 42 | - | - |
| **Ընդամենը եկամուտ** | | **51,061** | **105,906** | **30,826** | **74,420** |
| Ֆոնդի կառավարման վճարների գծով ծախսեր | 8 | (329,875) | (726,560) | (219,200) | (432,148) |
| Պահառության և ռեեստրավարման գծով ծախսեր | | (6,314) | (20,291) | (4,557) | (14,665) |
| Միջնորդավճարներ | | (6,600) | (26,481) | (626) | (2,017) |
| Մասնագիտական ծառայությունների գծով ծախս | | - | - 8,000.00 | - | (5,000) |
| Այլ ծախսեր | | (9) | (2,129) | (9) | (1,029) |
| **Ընդամենը ծախսեր** | | **(291,737)** | **(677,555)** | **(193,566)** | **(380,439)** |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների վաճառքից զուտ օգուտ / (վնաս) | 9 | 562,586 | 1,871,519 | 359,940 | 716,578 |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխությունից զուտ օգուտ / (վնաս) | 10 | 335,646 | 70,762 | 215,939 | 365,888 |
| Արտարժույթի փոխարկումներից զուտ օգուտ / (վնաս) | | 98 | (429) | (517) | (1,443) |
| Արտարժույթի վերագնահատումներից զուտ օգուտ / (վնաս) | 11 | 1,631 | (81,555) | (3,619) | (61,834) |
| **Զուտ շահույթ / (վնաս) մինչև հարկումը** | | **608,224** | **1,182,742** | **378,177** | **638,750** |
| Շահութահարկի գծով ծախս | | (153) | (450) | (81) | (208) |
| **Շահույթ / (վնաս) և այլ համապարփակ ֆինանսական արդյունք հաշվետու ժամանակահատվածի համար** | | **608,071** | **1,182,292** | **378,096** | **638,542** |
| **Փայատերերին վերագրելի զուտ ակտիվների աճ / (նվազում)** | | **608,071** | **1,182,292** | **378,096** | **638,542** |

«ԼԻՄԻԹԼԵՍ ՓՐԱՅՄ» ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴ

## Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

| Հազար ՀՀ դրամ | Փայատերերին վերագրելի զուտ ակտիվներ |
|---|---|
| **Մնացորդը 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **4,526,124** |
| **Փայերի թողարկումներ / (մարումներ)** | |
| Փայերի թողարկումներ | 5,104,510 |
| Փայերի մարումներ | (4,071,059) |
| **Զուտ աճ / (նվազում) փայերով գործարքներից** | **1,033,451** |
| **Փայատերերին վերագրելի զուտ ակտիվների աճ / (նվազում) նախորդ ժամանակահատվածների համար** | **574,221** |
| **Փայատերերին վերագրելի զուտ ակտիվների աճ / (նվազում) հաշվետու ժամանակահատվածի համար** | **608,071** |
| **Մնացորդը 2025 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ** | **6,741,867** |

**«ԼԻՄԻԹԼԵՍ ՓՐԱՅՄ» ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴ**

**Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն**

Հազար ՀՀ դրամ

| | 2025թ հուլիսի 1-ից 2025թ սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատված | 2025թ հունվարի 1-ից 2025թ սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատված | 2024թ հուլիսի 1-ից 2024թ սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատված | 2024թ հունվարի 1-ից 2024թ սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատված |
|---|---|---|---|---|
| **Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | | | | |
| Ստացված տոկոսներ | - | - | 3.00 | 3.00 |
| Վճարված միջնորդավճարներ | (6,600) | (26,473) | (628) | (2,010) |
| Վճարված կառավարման վճարներ | (373,872) | (425,951) | (201,372) | (336,962) |
| Վճարումներ ստացված ծառայությունների դիմաց | (5,942) | (30,589) | (5,539) | (21,371) |
| Բաժնետոմսերի առուվաճառքից զուտ հոսքեր | 748,378 | (99,014) | (730,967) | (650,593) |
| Ածանցյալ գործիքների առուվաճառքից զուտ հոսքեր | 718,507 | 1,901,424 | 248,493 | 643,729 |
| Արտարժույթի փոխարկումներից զուտ ելքեր | 581 | (90) | (517) | (1,442) |
| Վճարված շահութահարկ | (63) | (421) | - 12.00 | - 81.00 |
| Ստացված շահաբաժին | 44,250 | 96,250 | 31,928 | 73,601 |
| Այլ գործառնական ելքեր | | - | - | - |
| Այլ գործառնական մուտքեր | - | 42 | - | - |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | **1,125,239** | **1,415,178** | **(658,611)** | **(295,126)** |
| **Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից** | | | | |
| Ավանդների մարումից մուտքեր | - | - | - | - |
| Ավանդների ներդրումից ելքեր | - | - | - | - |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից** | **-** | **-** | **-** | **-** |
| **Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | | | | |
| Տրամադրված փոխառություն | - | - | - | - |
| Փայերի թողարկումից մուտքեր | 877,304 | 1,115,913 | 280,216 | 980,840 |
| Փայերի մարումից ելքեր | (33,769) | (87,116) | (11,532) | (11,532) |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | **843,535** | **1,028,797** | **268,684** | **969,308** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)** | **1,968,774** | **2,443,975** | **(389,927)** | **674,182** |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում** | **3,809,580** | **3,412,900** | **2,408,688** | **1,402,565** |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | (21,636) | (100,157) | (3,601) | (61,587) |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում** | **5,756,718** | **5,756,718** | **2,015,160** | **2,015,160** |

## Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

### 1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«ԼԻՄԻԹԼԵՍ ՓՐԱՅՄ» ֆոնդը լրացուցիչ ռիսկով հրապարակային, պայմանագրային, բաց ներդրումային ֆոնդ է: Ֆոնդը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Ֆոնդը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) 2023 թվականի հուլիսի 11-ի թիվ 106-Ա որոշմամբ:

Ֆոնդի ներդրումային նպատակը միավոր ռիսկի դիմաց հավելյալ եկամտի ստացումն է: Ֆոնդի ակտիվները առավելապես ներդրվում են միջազգային կարգավորվող շուկաներում (որպես հիմնական շուկաներ դիտարկվում են Նյու Յորքի ֆոնդային բորսան և Նասդաքը) ցուցակված/շրջանառվող իրացվելի արժեթղթերում՝ բաժնետոմսերում, պարտատոմսերում, բորսայում շրջանառվող ֆոնդերում, ածանցյալ գործիքներում: Նշված գործիքներից յուրաքանչյուրի պարագայում ներդրման առավելագույն չափը կարող է հասնել մինչև ընդհանուր ակտիվների 100 տոկոսին:

Կարգավորող մարմինները բազմաթիվ ձևերով վերահսկում են Ֆոնդի գործունեությունը, և կարող են իրականացնել կանոնավոր ստուգումներ՝ կիրառելի օրենսդրության, կանոնակարգերի և կանոնների հետ համապատասխանություն ապահովելու նպատակով:

Ֆոնդի կառավարումն իրականացնում է «Լիմիթլես Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն, որը գրանցված է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (27.12.2022թ. լիցենզիայի համարը 0007)՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան (այսուհետ՝ Կառավարիչ):

Ֆոնդի Կառավարչի գրանցման հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Քեռու 1/3 տ 5-րդ հարկ:

### 2 Պատրաստման հիմքերը

#### 2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջներին համապատասխան:

#### 2.2 Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար Ֆոնդի կողմից ընդունված չափման հիմունք է հանդիսանում սկզբնական արժեքը, որը սովորաբար համակցվում է այլ չափման հիմունքների հետ: Այլ չափման հիմունքներ կիրառելիս Ֆոնդը ներկայացնում է բացահայտումներ համապատասխան ծանոթագրություններում:

#### 2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած դեպքերի և Ֆոնդի գործարքների տնտեսական բովանդակությունը: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

#### 2.4 Անընդհատություն

Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են, ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում և որ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում գործունեությունը դադարեցնելու կամ էական կրճատելու մտադրություն կամ անհրաժեշտություն չկա:

#### 2.5 Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:
Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

### 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

#### 3.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ֆոնդ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ֆոնդից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

*Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ*

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Ֆոնդը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու սպասվող պարտքային վնասը:
Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով ապագա դրամական միջոցների հոսքերը՝ ներառյալ սպասվող պարտքային վնասը:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

*Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք*

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված սպասվող պարտքային վնասի գծով պահուստի մասով:
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան սպասվող պարտքային վնասի գծով պահուստի մասով ճշգրտումը:

*Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ*

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը բարելավվում է:

**3.2 Արտարժույթ**

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ֆոնդի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը:

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, բացառությամբ այնպիսիների, որոնք առաջանում են իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով ֆինանսական գործիքների, որոնք ճանաչվում են որպես զուտ օգուտի կամ վնասի բաղադրիչ՝ ստացված իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով ֆինանսական գործիքներից:

**3.3 Ֆինանսական գործիքներ**

*Ճանաչում և ապաճանաչում*

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ֆոնդը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:
Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:
Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

*Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը*

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:
Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,

- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով։

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ֆոնդի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները։

*Ֆինանսական ակտիվների հետագա չափումը*

*Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ։

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը։ Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում։ Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ֆոնդի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը։

*Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով*

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են «հավաքագրման համար պահվող» կամ «հավաքագրման և վաճառքի համար պահվող» բիզնես մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով։ Հետագայում, անկախ բիզնես մոդելից, բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց պայմանագրային դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսի մարում, հաշվառվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով։ Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվում են այս կատեգորիայում, բացառությամբ հեջավորման գործիքների, որոնց համար գործում են հեջավորման հաշվառմանը ներկայացվող պահանջները։

Այս կատեգորիայում դասակարգված ակտիվները չափվում են իրական արժեքով՝ օգուտները կամ կորուստները ճանաչելով շահույթում կամ վնասում։ Այս կատեգորիայում դասակարգված ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշվում է գործող շուկայի գործարքներին հղում կատարելով կամ, այն պարագայում, երբ առկա չէ գործող շուկա՝ կիրառելով գնահատման մեթոդ։

Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում ներդրումների բաշխման համաձայնագրերը։ Ֆոնդը մշտական հիմունքներով դասակարգել է ներդրումները գործիքներում որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ։

*Ֆինանսական ակտիվների արժեզրկում*

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»։

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»։ ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են բանկային հաշիվները և բանկերում տեղաբաշխված ավանդները։

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»)։

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ։

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար։ Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով։

*Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը*

Ֆոնդի ֆինանսական պարտավորությունները ներառում են կրեդիտորական պարտքերը, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտավորությունները և այլ պարտավորություններ, որոնք ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պարտավորություններում։

Ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, և, որտեղ կիրառելի է, ճշգրտվում են՝ հաշվի առնելով գործարքի գինը, եթե Ֆոնդը ֆինանսական պարտավորությունը չի դասակարգել որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով։

Հետագայում ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը։

**3.4. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են պահանջները բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Ընկերությունը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

**3.5 Զուտ ակտիվներ**

Թողարկված փայերի դիմաց ստացված գումարները հաշվառվում են որպես շարժ փայատերերին վերագրելի զուտ ակտիվների փոփոխության մասին հաշվետվությունում:

Փայատերերին վերագրելի զուտ ակտիվների աճը ներառում է ընթացիկ տարվա շահույթը:

**3.6 Շահութահարկ**

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հաշվարկվում է Ֆոնդի զուտ ակտիվների նկատմամբ 0.01% -ով:

**4. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

| Հազար ՀՀ դրամ | 2025 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ | 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Ընթացիկ հաշիվներ բանկերում | 242,136 | 528,387 |
| Ընթացիկ հաշիվներ այլ ֆինանսական կազմակերպություններում | 5,514,582 | 2,884,513 |
| **Ընդամենը** | **5,756,718** | **3,412,900** |

**5. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումներ**

| Հազար ՀՀ դրամ | 2025 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ | 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Սովորական բաժնետոմսեր | 946,826 | 1,158,081 |
| Օպցիոններ | 953,202 | 361,925 |
| **Ընդամենը** | **1,900,028** | **1,520,006** |

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումներն իրենցից ներկայացնում են Ֆոնդի բնականոն գործունեության ընթացքում առևտրային նպատակով պահով արժեթղթերը և ածանցյալ գործիքները:

**6. Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ**

Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ հոդվածն հիմնականում իրենից ներկայացնում է Ֆոնդի կողմից ստացվելիք շահաբաժինների և ֆինանսկան կազմակերպություններում առկա դրամական միջոցների նկատմամբ հաշվեգրված տոկոսների գումարները: Այս հոդվածին վերաբերող հաշվեգրված եկամուտները ներկայացված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության «Տոկոսային եկամուտ» և «Շահաբաժիններից եկամուտ» հոդվածներում:

**7. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտավորություններ**

| Հազար ՀՀ դրամ | 2025 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ | 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Օպցիոններ | 639,853 | 401,810 |
| Արժեթղթեր | - | 70 |
| **Ընդամենը** | **639,853** | **401,880** |

**8. Կրեդիտորական պարտքեր կառավարման վճարների գծով**

Կառավարչի պարգևավճարը բաղկացած է երկու մասից՝

(ա) տարեկան 2 (երկու) տոկոսի չափով հաստատուն վճար՝ ֆոնդի զուտ ակտիվների արժեքի նկատմամբ: Հաստատուն վճարը վճարվում է եռամսյակային պարբերականությամբ՝ եռամսյակին հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը: Հաստատուն վճարի հաշվարկման համար հիմք է ընդունվում ֆոնդի զուտ ակտիվների արժեքի միջին եռամսյակային մեծությունը:

(բ) հավելավճար՝ տարեկան 10 տոկոս եկամտաբերությունը (հաշվի առած բոլոր ծախսերը) գերազանցող գումարի 40 (քառասուն) տոկոսի չափով:
Հավելավճարը հաշվարկվում է հետևյալ սկզբունքով. բոլոր արժույթներով ակտիվները վերածվում են ԱՄՆ դոլարի՝ հավելավճարի հաշվարկման օրվա դրությամբ հրապարակված ՀՀ ԿԲ փոխարժեքով, և պարգևավճարը հաշվարկվում է ԱՄՆ դոլարով արտահայտված եկամտաբերության նկատմամբ:
Հավելավճարի հաշվարկման համար հիմք է ընդունվում նախորդող տարվա վերջին օրվա դրությամբ եկամտաբերությունը:
Հավելավճարը վճարվում է տարեկան պարբերականությամբ՝ օրացուցային տարվան հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը:
Ընդ որում հավելավճարը գանձվում է այն պարագայում, երբ տվյալ տարվա վերջում փայի արժեքը գերազանցում է նախորդող՝ այն տարվա վերջի փայի արժեքը, որի ժամանակ գանձվել է հավելավճար (բացառություն է կազմում առաջին անգամ գանձվող հավելավճարը, որը հաշվարկվում է անվանական արժեքի նկատմամբ):
Առաջին տարում հավելավճարի համար հիմք է հանդիսանում, փայերի առաջին թողարկումից մինչև օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա ժամանակահատվածը:

Սույն հաշվետվության մեջ ներկայացված կառավարման վճարների գծով ծախսերը և կրեդիտորական պարտքերը ձևավորվել են վերը թվարկված Ֆոնդի կանոնների հիման վրա:

**9. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների վաճառքից զուտ օգուտ / (վնաս)**

| Հազար ՀՀ դրամ | 2025թ հուլիսի 1-ից 2025թ սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատված | 2025թ հունվարի 1-ից 2025թ սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատված | 2024թ հուլիսի 1-ից 2024թ սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատված | 2024թ հունվարի 1-ից 2024թ սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատված |
|---|---|---|---|---|
| Բաժնետոմսերի առուվաճառքից զուտ օգուտ / (վնաս) | 82,451 | (155,941) | 10,283 | 64,742 |
| Ածանցյալ գործիքների առուվաճառքից զուտ օգուտ / (վնաս) | 480,135 | 2,027,460 | 349,657 | 651,836 |
| **Ընդամենը** | **562,586** | **1,871,519** | **359,940** | **716,578** |

**10. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխությունից զուտ օգուտ / (վնաս)**

| Հազար ՀՀ դրամ | 2025թ հուլիսի 1-ից 2025թ սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատված | 2025թ հունվարի 1-ից 2025թ սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատված | 2024թ հուլիսի 1-ից 2024թ սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատված | 2024թ հունվարի 1-ից 2024թ սեպտեմբերի 30-ն ընկած |
|---|---|---|---|---|
| Արժեթղթերի իրական արժեքի փոփոխություններից զուտ օգուտ / (վնաս) | 201,962 | (156,361) | (34,888) | (1,965) |
| Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխություններից զուտ օգուտ / (վնաս) | 133,684 | 227,123 | 250,827 | 367,853 |
| **Ընդամենը** | **335,646** | **70,762** | **215,939** | **365,888** |

**11. Արտարժույթի վերագնահատումներից զուտ օգուտ / (վնաս)**

| Հազար ՀՀ դրամ | 2025թ հուլիսի 1-ից 2025թ սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատված | 2025թ հունվարի 1-ից 2025թ սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատված | 2024թ հուլիսի 1-ից 2024թ սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատված | 2024թ հունվարի 1-ից 2024թ սեպտեմբերի 30-ն ընկած |
|---|---|---|---|---|
| **Արտարժույթի վերագնահատումներից օգուտ** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 24,547 | 41,513 | 677 | 6,832 |
| **Ընդամենը օգուտ** | **24,547** | **41,513** | **677** | **6,832** |
| **Արտարժույթի վերագնահատումներից վնաս** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | (22,916) | (123,068) | (4,296) | (68,666) |
| **Ընդամենը վնաս** | **(22,916)** | **(123,068)** | **(4,296)** | **(68,666)** |
| **Արտարժույթի վերագնահատումներից զուտ օգուտ / (վնաս)** | **1,631** | **(81,555)** | **(3,619)** | **(61,834)** |

**12. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ**

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:
Ֆոնդն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին:
Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

*Իրական արժեքի չափումը*

Այն պարագայում, երբ գործող շուկաների տվյալները բացակայում են, ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելու համար ղեկավարությունը օգտագործում է գնահատման մեթոդներ։
Այս գործընթացը ընդգրկում է գնահատումների և ենթադրությունների մշակում, որոնք համահունչ են նրա հետ, թե ինչպես շուկայի մասնակիցները կգնահատեին գործիքը։
Ղեկավարությունը իր ենթադրությունների համար որպես հիմք է վերցնում դիտարկելի տեղեկատվությունը, սակայն այդպիսի տեղեկատվությունը միշտ չէ, որ հասանելի է։ Այս պարագայում ղեկավարությունը օգտագործում է հասանելի լավագույն տեղեկատվությունը և օգտագործում է գնահատման այլ տեխնիկաներ, մասնավորապես՝ թե՛ արտաքին, թե՛ ներքին շուկաներում համանման գործիքների հետ համեմատության մեթոդը։ Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել հաշվետու ամսաթվի դրությամբ իրական գներից, որոնք կարող են ստացվել պարզած ձեռքի գործարքի պարագայում։

**13. Ֆինանսական գործիքներ**

**13.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ**

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում։

**13.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները**

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

*Ֆինանսական ակտիվներ*

| Հազար ՀՀ դրամ | 2025 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ | 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| **Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ** | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 5,756,718 | 3,412,900 |
| Ավանդներ | - | - |
| Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 15,830 | 8,059 |
| | **5,772,548** | **3,420,959** |
| **իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ** | | |
| Արժեթղթեր | 946,826 | 1,158,081 |
| Օպցիոններ | 953,202 | 361,925 |
| | **1,900,028** | **1,520,006** |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ** | **7,672,576** | **4,940,965** |

*Ֆինանսական պարտավորություններ*

| | | |
|---|---|---|
| **Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ** | | |
| Կրեդիտորական պարտքեր կառավարման վճարների գծով | 30,780 | 28,701 |
| Այլ պարտավորություններ | 1,918 | 24,081 |
| | **32,698** | **52,782** |
| **իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ** | | |
| Օպցիոններ | 639,853 | 401,810 |
| Արժեթղթեր | - | - |
| | **639,853** | **401,810** |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **672,551** | **454,592** |

**14 Պահուստ**

Սույն ծանոթագրությունում ներկայացված պահուստն իրենից ներկայացնում է ֆոնդի կանոններով նախատեսված կառավարման պարգևավճարների գծով առաջացող պահուստը։

| Պահուստ կառավարման պարգևավճարի գծով | 2025 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ | 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Սկզբնական մնացորդ | - | - |
| Պահուսի զուտ ավելացում/նվազեցում | 298,099 | - |
| Վերջնական մնացորդ | **298,099** | **-** |

## 15. Ռիսկերի կառավարում

Ֆոնդի գործունեությանը բնորոշ են մի շարք ֆինանսական ռիսկեր, ինչպիսիք են՝ շուկայական, պարտքային, իրացվելիության ռիսկերը, ինչպես նաև՝ ոչ ֆինանսական ռիսկեր, ինչպիսիք են՝ տեխնոլոգիական, գործառնական, իրավաբանական և վարկանիշային ռիսկերը: Այս ռիսկերի հայտնաբերումը և կառավարումը կարևորագույն դեր է խաղում Կառավարչի և Ֆոնդի հաջողության և ֆինանսական կայունության տեսանկյունից: Այս ծանոթագրությունը ներկայացնում է նշված ռիսկերի ազդեցությունը Ֆոնդի վրա, այդ ռիսկերի չափման և կառավարման նպատակները, քաղաքականությունը և գործընթացները:

Կառավարիչն ակտիվ դեր ունի ռիսկերի կառավարման գործընթացում: Ռիսկերի կառավարման աշխատանքների վերահսկողությունն իրականացնում է Կառավարչի գործադիր մարմինը, որը
պատասխանատու է ռիսկի գործոնների ուսումնասիրության և վերահսկողության համար, և վարում է ռիսկերի կառավարման քաղաքականության և գործընթացների շարունակական մշակման և բարելավման աշխատանքները: Առանձնահատուկ ռիսկ պարունակող ոլորտներն են՝

- պարտքային և շուկայական ռիսկերը, որոնք առաջանում են որոշակի արժեթղթերի գծով դիրքերի ձեռքբերման հետևանքով,
- տեղեկատվական անվտանգության և տվյալների պաշտպանության ռիսկերը, որոնց գծով առանձնահատուկ
- ուշադրություն պահանջող ոլորտներն են տեղեկատվական անվտանգության և տվյալների պաշտպանության քաղաքականությունը, ընթացակարգերը և վերահսկողությունները,
- ներդրումների կառավարումը, որտեղ առանձնահատուկ ուշադրություն են պահանջում այն գործողությունները, որտեղ Ֆոնդը և նրա պրինցիպալները հանդես են գալիս որպես ներդրումային խորհրդատուներ,
- գործառնական ռիսկերը, որտեղ առանձնահատուկ կարևորություն է տրվում ներքին գործընթացների, մարդկային ռեսուրսների և համակարգերի աշխատանքների ոչ պատշաճ կատարմանը կամ խափանմանը կամ արտաքին միջադեպերի կամ հարաբերությունների (օրինակ՝ մատակարարներ և բիզնես գործընկերներ) գծով առաջանալիք ռիսկերին:

Ղեկավարության կողմից սահմանված են քաղաքականություններ և ընթացակարգեր, որոնցով պետք է առաջնորդվեն աշխատակիցները՝ հաճախորդների հետ հարաբերություններում, ինչպես նաև զանազան գործընկերների հետ փոխհարաբերություններ կառուցելու պայմանները: Հաճախորդներին առնչվող քաղաքականություններում անդրադարձ է արված հաճախորդների կողմից ֆոնդերում մասնակցության, տվյալների և ֆիզիկական անվտանգության, ոլորտի կանոնակարգերի և էթիկայի կանոնների պահպանման հարցերին:

Կառավարչի գործունեությանը բնորոշ են ռիսկեր: Հետևաբար, չնայած ռիսկային ոլորտների հայտնաբերմանն ուղղված քայլերին, ինչպես նաև ռիսկերի կառավարման քաղաքականություններին և ընթացակարգերին, չի կարելի բացառել, որ կառավարիչը և Ֆոնդը կարող են անկանխատեսելի վնասներ կրել գործառնական և այլ ռիսկերի առաջացման արդյունքում:

### 15.1 Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական ռիսկերն այն ռիսկերն են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքներից, որոնց հակված է Ֆոնդը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կամ ավարտին: Ֆինանսական ռիսկն իրենից ներկայացնում է շուկայական ռիսկը (ներառյալ՝ արտարժութային ռիսկը), պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը: Ֆինանսական ռիսկի կառավարման գործառույթի առաջնային նպատակն է՝ սահմանել ռիսկի սահմանաչափերը, այնուհետև՝ ապահովել, որ ռիսկի հակվածությունը մնա այդ սահմանաչափի շրջանակներում:
Ֆոնդը կարող է պահպանել ածանցյալ և ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների տարբեր դիրքեր՝ համաձայն իր ներդրումային կառավարման ռազմավարության: Ֆոնդի կանոններում սահմանված են ներդրումային քաղաքականությունը և ուղղությունները, որոնք ամփոփում են ֆոնդի ընդհանուր ռազմավարությունը, ռիսկի դիմելու ցանկությունը և ընդհանուր ռիսկերի կառավարման փիլիսոփայությունը: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ֆոնդը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

**Ֆինանսական ռիսկի գործոններ**

*ա) Շուկայական ռիսկ*

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ֆոնդը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը բխում է գործառնական գործունեությունից:
Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել ռիսկին ենթարկվածության ասիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով եկամտաբերության օպտիմալացումը:

*Արտարժութային ռիսկ*

Արտարժույթային ռիսկն առաջանում է այն ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով, որոնք Ֆոնդի գործառնական արժույթով չեն պահվում:
Կառավարիչն ունի սահմանված քաղաքականություն՝ Ֆոնդի վրա արտարժույթի ռիսկի ազդեցությունը կառավարելու համար՝ Ֆոնդի կանոններում սահմանված արտարժույթի դիվերսիֆիկացման պայմանների համաձայն:
Ֆոնդի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

2025 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ

| Հազար ՀՀ դրամ | | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | Եվրո |
|---|---|---|---|---|
| **Ֆինանսական ակտիվներ** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | | 1,577 | 5,755,141 | - |
| Ավանդներ | | - | - | - |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումներ | | - | 1,900,028 | - |
| Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | | - | 15,830 | - |
| **Ընդամենը** | | **1,577** | **7,670,999** | **-** |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտավորություններ | | - | 639,853 | - |
| Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով | | 312 | - | - |
| Կրեդիտորական պարտքեր կառավարման վճարների գծով | | 30,780 | - | - |
| Այլ պարտավորություններ | | 1,918 | - | - |
| **Ընդամենը** | | **33,010** | **639,853** | **-** |
| **Զուտ դիրք** | **-** | **31,433.00** | **7,031,146** | **-** |

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

| Հազար ՀՀ դրամ | | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | Եվրո |
|---|---|---|---|---|
| **Ֆինանսական ակտիվներ** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | | 10,160 | 3,397,692 | 5,048 |
| Ավանդներ | | - | - | - |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումներ | | - | 1,520,006 | - |
| Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | | - | 8,059 | - |
| **Ընդամենը** | | **10,160** | **4,925,757** | **5,048** |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտավորություններ | - | 1 | 401,881 | - |
| Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով | | 282 | - | - |
| Կրեդիտորական պարտքեր կառավարման վճարների գծով | | 28,701 | - | - |
| Այլ պարտավորություններ | | 24,081 | - | - |
| **Ընդամենը** | | **53,063** | **401,881** | **-** |
| **Զուտ դիրք** | **-** | **42,903.00** | **4,523,876** | **5,048** |

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ֆոնդի զգայունությունը՝ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի և Եվրոյի 10% աճին/նվազմանը: 10%-ը ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով:

ԱՄՆ դոլարի և եվրոյի արժևորումը դրամի 10%-ով կունենա հետևյալ ազդեցությունը

| | 2025 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ | | 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ | |
|---|---|---|---|---|
| **Հազար ՀՀ դրամ** | **ԱՄՆ դոլար** | **Եվրո** | **ԱՄՆ դոլար** | **Եվրո** |
| Շահույթ կամ վնաս | 703,115 | - | 452,388 | 504.80 |

*բ) Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ֆոնդը կարող է ֆինանսական կորուստներ կրել:
Պարտքային ռիսկը կորստի ռիսկն է, որը կարող է առաջանալ փոխառուի, թողարկողի կամ պայմանագրային կողմի՝ պայմանավորվածության համաձայն ֆինանսական պարտավորությունները կատարելու կարողության վատթարացման արդյունքում: Ֆոնդը կրում է պարտքային ռիսկ առաջին հերթին ներդրումային գործունեության և բանկերում մնացորդների գծով: Ֆոնդը փորձում է կառավարել իր պարտքային ռիսկը՝ կիրառելով վերահսկվող ներդրումային ռազմավարություն, ինչպես նաև կիրառելով ողջամիտ դատողություն բանկային գործընկերներ ընտրելիս:

Ֆոնդի ֆինանսական կատարողական արդյունքները վերահսկվում են եռամսյակային կտրվածքով կամ ավելի հաճախակի, ըստ անհրաժեշտության, Կառավարչի կողմից ֆինանսական ռիսկի կառավարման գործընթացների շրջանակներում:

*գ) Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ֆոնդը դժվարություն կունենա իր այն ֆինանսական պարտավորությունները կատարելիս, որոնց մարումը նախատեսվում է կատարել դրամական միջոցներով կամ այլ ֆինանսական ակտիվներով: Իրացվելիության դիրքի և դրամական հոսքերի վրա ազդող գործոնները ներառում են ներդրումային գործունեությունը, փայերի բաժանորդագրման և մարման տեմպերը: Այս գործոնների համակցությունը կարող է առաջացնել էական տատանումներ որոշակի ժամկետներում Իրացվելիության դիրքի գծով:

Ֆոնդի քաղաքականությունը և ներդրումային կառավարչի մոտեցումը իրացվելիության կառավարմանը կայանում է նրանում, որպեսզի Ֆոնդն ունենա բավարար իրացվելիություն պատրավորությունների կատարման, ներառյալ՝ փայերի մարման համար, թե ընթացիկ, և թե սթրեսային իրավիճակներում՝ առանց Ֆոնդի վարկանիշին անընդունելի վնաս հասցնելու կամ կորուստներ առաջացնելու:

**16 Իրական արժեքի չափում**

Ֆոնդը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Սույն հաշվետվությունում ներկայացված բոլոր ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով բավարարում են վերը հիշատակված 1-ին մակարդակի դասակարգմանը:

**17 Գործառնական ռիսկի կառավարում**

Ֆոնդի նպատակն է կառավարել գործառնական ռիսկը, որպեսզի հավասարակշռի ֆինանսական կորուստները, ինչպես նաև իր հեղինակությանը հասցվող վնասը: Գործառնական ռիսկի շուրջ զարգացման և վերահսկողության ձևավորման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Ֆոնդի կառավարիչը, որի կառավարման համար նա առաջնորդվում է ընդհանուր ստանդարտներով, ինչը ներառում է վերահսկողություն բիզնես գործընթացների նկատմամբ:

**18 Գործարքներ Կառավարչի և այլ կապակցված կողմերի հետ**

| | Հաշվետու ժամանակահատված | | Համադրելի ժամանակահատված | |
|---|---|---|---|---|
| **Հազար ՀՀ դրամ** | **Գործարքի գումար** | **Չմարված մնացորդ** | **Գործարքի գումար** | **Չմարված մնացորդ** |
| Կառավարման վճար | 329,875 | 30,780 | 219,200 | 28,701 |